DOI: 10.59560/18291155-2023.4-49

ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ, Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԹՄՐԱՀԱՆՑԱԳՈՐԾԻ ԱՆՁԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՄՐԱՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացված են հեղինակի կողմից իրականացված թմրահանցագործի անձի քրեաբանական հետազոտության արդյունքները՝ 2017-2022 թվականների կտրվածքով:

Հեղինակի հետազոտության արդյունքները վկայում են, որ թմրահանցագործություններ կատարող անձանց ընդհանրացված ձևով բնորոշ է երիտասարդ տարիքի (հատկապես 30-49 տարեկան) քրեական ակտիվությունը, ցածր կրթական մակարդակը, մշտական աշխատանքային զբաղվածություն չունենալը, թմրահանցանքը գերազանցապես շահադիտական դրդապատճառով կատարելը և այլն: Նշված և թմրահանցագործին բնութագրող այլ տվյալները պետք է հաշվի առնվեն թմրահանցագործությունների անհատական կանխարգելման ուղղվածությունը որոշելիս, մեթոդն ընտրելիս և այլ հարցեր կարգավորելիս:

Հեղինակի հետազոտության արդյունքները հավաստում են, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը հնարավորություն չի տալիս անհատական կանխարգելումն իրականացնել ամբողջովին: Ուստի հեղինակն առաջարկում է կատարել օրենսդրական համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

Բացի այդ, հեղինակը նշում է, որ անհատական կանխարգելումը, որպես կանոն, ենթադրում է համապատասխան օբյեկտի նկատմամբ հոգեբանական ներգործություն համոզման մեթոդի կիրառմամբ, որը լիարժեք չի կարող կենսագործվել իրավաբան իրավապահների կողմից: Ուստի անհրաժեշտ է ՆԳՆ ոստիկանության տարածքային մարմիններում նախատեսել հոգեբանի հաստիքներ և ամրագրել անհատական կանխարգելիչ աշխատանքներին հոգեբանների ներգրավման օրենսդրական հիմքեր:

Հիմնաբառեր. թմրահանցագործի անձի կառուցվածքային տարրերը, թմրահանցագործությունների անհատական կանխարգելումը:

Ներածություն

Պետությունն ուշադրության կենտրոնում է պահում թմրահանցավորության դեմ պայքարի հարցերը: Այդ մասին են վկայում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի տարեկան ծրագրերի ընդունումը և դրանցով նախատեսված, այդ թվում՝ օպերատիվ-կանխարգելիչ և հատուկ միջոցառումների իրագործումը, միջազգային մակարդակով համագործակցությունը և այլն:

Այդուհանդերձ, վիճակագրական տվյալները վկայում են քրեաբանական բացասական միտումների մասին: Այսպես, 2019 թվականից արձանագրվում է թմրահանցավորության անընդհատ աճ, ինչը վկայում է կանխարգելիչ ներգործության ակտիվացման, նոր, ներառյալ՝ իրավական մոտեցումների մշակման անհրաժեշտության մասին: Իսկ դրա համար հարկավոր է թմրահանցավորության քրեաբանական բաղադրիչների, այդ թվում՝ թմրահանցագործի անձի հետազոտության իրականացում:

Նշվածից ելնելով՝ սույն հետազոտության նպատակն է 2017-2022 թվականների կտրվածքով թմրահանցագործություններ կատարող անձի քրեաբանական բնութագրի բացահայտումը և թմրահանցագործությունների անհատական կանխարգելման խնդիրների ներկայացումը:

Հետազոտության խնդիրն է թմրահանցագործի անձի նկարագրի և կառուցվածքային տարրերի ներկայացումը, թմրահանցագործությունների անհատական կանխարգելման իրականացմանը խոչընդոտող գործոնների վերացման առաջարկությունների ներկայացումը:

Թմրահանցագործություններ կատարողի անձի բնութագիրը և կառուցվածքը

Թմրահանցագործի անձը բնորոշվում է որպես թմրահանցագործություններ կատարած մարդու՝ սոցիալապես նշանակալի հատկությունների ամբողջություն, որոնք, արտաքին պայմանների հետ զուգակցվելով, ազդում են նրա հանցավոր վարքագծի վրա[1]: Քննարկվող հասկացության համար պարտադիր է այն հանգամանքը, որ հանցագործությունը կատարվում է անձին հատկանշական հակահասարակական հայացքների և բնակչության առողջության, թմրամիջոցների օրինական շրջանառության հանդեպ բացասական վերաբերմունքի արդյունքում:

Թմրահանցագործի անձն ունի որոշակի կառուցվածք, որը ներառում է հետևյալ ենթակառուցվածքները.

1. Սոցիալ-ժողովրդագրական հատկանիշներ

Հատկանիշների այս խումբն են կազմում անձի սեռը, տարիքը, ընտանեկան և պաշտոնական դրությունը, մասնագիտությունը և այլ հատկանիշները:

Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության ոստիկանության տեղեկատվական կենտրոնի տվյալների համաձայն՝ **2017 թվականին** թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով պատասխանատվության է ենթարկվել 557 անձ, որից՝ 551 չափահաս (այդ թվում՝ 74՝ 18-24 տարեկան (13,2 տոկոս), 87՝ 25-29

[1] Տե՛ս **Кобец П.Н.** Личность рецидивиста и особенности ее формирования //Закон и право. 2001. № 11, էջ 39:

տարեկան (15,6 տոկոս), 285՝ 30-49 տարեկան (51,1 տոկոս), 105՝ 49 տարեկան և բարձր (18,2 տոկոս)), և 6 անչափահաս (1,7 տոկոս):

Քրեական պատասխանատվության ենթարկված անձանց կազմում կանանց թիվը կազմել է 20 (3,5 տոկոս), օտարերկրացիներինը՝ 29 (5,2 տոկոս):

2018 թվականին թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով պատասխանատվության է ենթարկվել 485 անձ, որից՝ 482 չափահաս (այդ թվում՝ 50՝ 18-24 տարեկան (10,3 տոկոս), 84՝ 25-29 տարեկան (17,3 տոկոս), 280՝ 30-49 տարեկան (57,7 տոկոս), 60՝ 49 տարեկան և բարձր (14,02 տոկոս)), և 3 անչափահաս (0,61 տոկոս):

Քրեական պատասխանատվության ենթարկված անձանց կազմում կանանց թիվը կազմել է 19 (3,9 տոկոս), օտարերկրացիներինը՝ 29 (5,9 տոկոս):

2019 թվականին թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով պատասխանատվության է ենթարկվել 510 անձ, որից՝ 500 չափահաս (այդ թվում՝ 45՝ 18-24 տարեկան (8,8 տոկոս), 65՝ 25-29 տարեկան (12,7 տոկոս), 240՝ 30-49 տարեկան (52.7տոկոս), 141՝ 49 տարեկան և բարձր (23.7 տոկոս)), և 10 անչափահաս (1,9 տոկոս):

Քրեական պատասխանատվության ենթարկված անձանց կազմում կանանց թիվը կազմել է 30 (5,8 տոկոս), օտարերկրացիներինը՝ 46 (9 տոկոս):

2020 թվականին թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով պատասխանատվության է ենթարկվել 490 անձ, որից՝ 486 չափահաս (այդ թվում՝ 40՝ 18-24 տարեկան (8,1 տոկոս), 65՝ 25-29 տարեկան (13,3 տոկոս), 240՝ 30-49 տարեկան (49 տոկոս), 141՝ 49 տարեկան և բարձր (28,8 տոկոս)), և 4 անչափահաս (0,8 տոկոս):

Քրեական պատասխանատվության ենթարկված անձանց կազմում կանանց թիվը կազմել է 21 (4,2 տոկոս), օտարերկրացիներինը՝ 23 (4,7 տոկոս):

2021 թվականին թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով պատասխանատվության է ենթարկվել 595 անձ, որից՝ 588 չափահաս, (այդ թվում՝ 49՝ 18-24 տարեկան (8,2 տոկոս), 68՝ 25-29 տարեկան (11,4 տոկոս), 294՝ 30-49 տարեկան (49,5 տոկոս), 177՝ 49 տարեկան և բարձր (29,8 տոկոս)), և 7 անչափահաս (1,1 տոկոս):

Քրեական պատասխանատվության ենթարկված անձանց կազմում կանանց թիվը կազմել է 29 (4,9 տոկոս), իսկ օտարերկրացիների թիվը 21 (3,5 տոկոս):

2022 թվականին թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով պատասխանատվության է ենթարկվել 754 անձ, որից՝ 748 չափահաս (այդ թվում՝ 88՝ 18-24 տարեկան (11,6 տոկոս), 116՝ 25-29 տարեկան (15,5 տոկոս), 301՝ 30-49 տարեկան (39,9 տոկոս), 243՝ 49 տարեկան և բարձր (32,2 տոկոս)), և 6 անչափահաս (0,8 տոկոս):

Քրեական պատասխանատվության ենթարկված անձանց շրջանակում կանանց թիվը կազմել է 33 (4,3 տոկոս), իսկ օտարերկրացիների թիվը 32 (4,2 տոկոս):

Այսպիսով, թմրահանցագործություններ կատարողների մեծ մասը՝ շուրջ 50 տոկոսը 30-49 տարեկան տղամարդիկ են: Քրեական պատասխանատվության ենթարկված անձանց կազմում կանանց միջին թիվը կազմել է 4,3 տոկոս, օտարերկրացիների թիվը՝ 5,4 տոկոս, անչափահասների թիվը՝ 1,2 տոկոս: Կանայք մեծ մասամբ հանդես են գալիս խմբի կազմում: Օտարերկրացիների մեծամասնությունն ազգությամբ պարսիկ է, որոնք քրեական պատասխանատվության են կանչվել, որպես կանոն, թմրամիջոցների մաքսանենգության և ապօրինի իրացման համար:

Թմրահանցագործների **ընտանեկան դրությունն** ունի հետևյալ պատկերը. ուսումնասիրված 317 անձից 63,72 տոկոսն ամուսնացած է (որից 0,63 տոկոսը գտնվում են փաստական ամուսնական հարաբերությունների մեջ), 25,55 տոկոսը՝ ամուրի, 10,73 տոկոսը՝ ամուսնալուծված:

Մեր հետազոտության արդյունքները վկայում են, որ թմրահանցագործներն ունեն ցածր **կրթական մակարդակ**: Այսպես, ուսումնասիրված 317 թմրահանցագործից 67,51 տոկոսն ունի միջնակարգ, 16,09 տոկոսը՝ թերի միջնակարգ, 5,99 տոկոսը՝ միջին մասնագիտական, 9,78 տոկոսը՝ բարձրագույն, 0,63 տոկոսը՝ թերի բարձրագույն կրթություն:

Թմրահանցագործների մեծամասնությունն **աշխատանքային զբաղվածություն** չունի: Այսպես, ուսումնասիրված 317 անձից 78,55 տոկոսը չի աշխատում:

2. Բարոյական որակներ և հոգեբանական առանձնահատկություններ

Բարոյական որակները և հոգեբանական առանձնահատկությունները թույլ են տալիս խորությամբ ճանաչել անձի բովանդակությունը: Հատկանիշների տվյալ խումբը հաճախ բաժանվում է ենթախմբերի, մասնավորապես առանձնացվում են գիտակցության արժեքային-նորմատիվ բնութագրերը (հայացքներ, համոզմունքներ, արժեքային կողմնորոշիչներ), պահանջմունքային-դրդապատճառային ոլորտը (պահանջմունքներ, հետաքրքրություններ, դրդապատճառներ)[1]:

Ի տարբերություն թմրամիջոցների գործածման դրդապատճառների (հաճույք ստանալը, ուրախ ժամանցը, հոգսերից կտրվելը), թմրահանցագործությունների դրդապատճառներն առավելապես ուղղված են անձի նյութական հետաքրքրությանը՝ շահին, ժամանցի համար գումար ձեռք բերելուն և այլն[2]: Շահադիտական դրդապատճառը հատկապես

[1] Տե՛ս **Чуфаровский Ю.В.** Криминология в вопросах и ответах: Учеб. пособие. – М.: ТК ВЕЛБИ, Изд-во «Проспект», 2006, էջ 38:

[2] Տե՛ս **Готчина Л.В.** Криминологическая характеристика личности молодого наркопреступника //Вестник Санкт-Петербургского университета МВД России. 1(49),2011 //https://cyberleninka.ru /article/n/kriminologicheskaya-harakteristika-lichnosti-molodogo-narkoprestupnika/viewer (վերջին մուտք՝ 28.10.2023):

բնորոշ է իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը, ապօրինի իրացմանը, մաքսանենգությանը:

Շահադիտական շարժառիթից բացի հանդիպում է նաև ինքնահաստատումը, մոտ շրջապատում սեփական նշանակալիության ճանաչման ձգտումը, որը հատկանշական է թմրամիջոցների իրացման կամ առանց իրացնելու նպատակով ապօրինի շրջանառությանը, ապօրինի իրացմանը, գործածմանը հակելուն կամ ներգրավելուն և այլ հանցանքներին:

Ուշագրավ է, որ թմրահանցագործությունները կարող են կատարվել նաև **կարեկցանքի դրդապատճառով:** Այսպես, մեր կողմից ուսումնասիրված քրեական գործերից մեկով պարզվել է, որ Թ.Կ.-ի մոտ ախտորոշվել է կոնվերսիոն խանգարում, ինչի կապակցությամբ 2020 թվականի օգոստոսի 28-ից (տվյալները փոխված են) նա հաշվառման է վերցվել «Ռ. Հ. բժշկական կենտրոն» ՓԲԸ հոգեբուժական կաբինետում, յուրաքանչյուր ամիս բժշկի նշանակմամբ նշված ընկերության պոլիկլինիկայից անվճար ստացել է համապատասխան հոգեմետ դեղորայքային բուժում՝ «Լորազեպամ» 2 միլիգրամ 1 հաբից, օրը երկու անգամ: 2021 թվականի հունվարի 27-ին Թ.Կ.-ն հերթական անգամ նշված պոլիկլինիկայի դեղատնից ստացել է իրեն հասանելիք «Լորազեպամ» 60 հատ դեղահաբ: Հաջորդ օրը իր բնակության վայրում՝ Ա. փողոցի 15-րդ շենքի 38-րդ բնակարանում հյուրընկալված Գ.Կ.-ից տեղեկանալով, որ վերջինս իրեն վատ է զգում և ունի գլխացավեր, Գ.Կ.-ի ցավերը մեղմացնելու նկատառումներից ելնելով, վերջինիս կողմից օգտագործելու համար ապօրինի իրացրել է իր բուժման համար ստացած նշված նյութի զգալի չափերի՝ թվով 9 հաբ:

3. Իրավաբանական հատկանիշներ

Իրավաբանական հատկանիշներն արտացոլում են անձի սոցիալական ձևախեղման աստիճանը: Այս հատկանիշներից են, օրինակ, **հանցավոր անցյալի մասին տեղեկությունները**: Այսպես, 2020 թվականին խնդրո առարկա հանցանք կատարած անձանց կազմում նախկինում դատապարտվածների թիվը կազմել է 6 հոգի (0,8 տոկոս), 2021 թվականին՝ 17 հոգի (2,8 տոկոս), 2022 թվականին՝ 52 հոգի (6,9

տոկոս): Այլ կերպ ասած, հանցավորների ընդհանուր թվում նախկինում դատապարտվածների թիվը միջինով կազմել է 4 տոկոս:

Թմրահանցագործությունների անհատական կանխարգելումը

Թմրահանցագործի անձի ուսումնասիրումը թմրահանցագործությունների անհատական կանխարգելման կազմակերպման հիմնաքարն է: Դրա արդյունքում ձեռք է բերվում կարևոր տեղեկատվություն: Այսպես.

1. թմրահանցագործների տարիքային բնութագրումը թույլ է տալիս դատել տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչների քրեածին ակտիվության դրսևորման ինտենսիվության աստիճանի և հանցավոր վարքի առանձնահատկությունների մասին,

2. թմրահանցագործների կրթական մակարդակը մեծապես կանխորոշում է հանցագործության բնույթը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ դա էապես ազդում է հետաքրքրությունների և պահանջմունքների շրջանակի, շփման և ժամանցի ուղղվածության և, վերջին հաշվով՝ անձի վարքի ձևի վրա,

3. թմրահանցագործների բարոյական որակները և հոգեբանական առանձնահատկությունները թույլ են տալիս խորությամբ բացահայտել անձի բովանդակությունը, ընտրել հոգեբանական ներգործության արդյունավետ հնարքներ և այլն:

Փաստորեն, ստացված տեղեկատվության հիման վրա պետք է որոշել անհատական կանխարգելման ուղղվածությունը (օրինակ՝ ռեցիդիվի պարագայում դա այլ է, քան առաջին անգամ թմրահանցանք կատարելու դեպքերում), ներգործության մեթոդը (օրինակ՝ դիտավորյալ թմրահանցագործի հանդեպ մոտեցումը պետք է լինի անզգույշ թմրահանցագործի համեմատ այլ), ընտրել ներգրավվող անձը (օրինակ՝ արդյունավետ կարող է լինել ամուսնու մասնակցությունը կանխարգելիչ միջոցառումներին) և այլն:

Մասնագիտական գրականության մեջ անհատական կանխարգելումը բնորոշվում է որպես կոնկրետ անձի հակաիրավական վարքի պատճառների ու պայմանների վրա ներգործության միջոցների (գերազանցապես համոզման բնույթ ունեցող) մշակում և տևական ժամանակահատվածում

իրագործում: Ընդ որում, անհատական կանխարգելման պարագայում հանցագործության կատարման հնարավորությունը կանխվում է ոչ միայն ներքին (սուբյեկտիվ, անձնային), այլև արտաքին (օբյեկտիվ) գործոնների չեզոքացման միջոցով, որոնք պայմանավորում են հանցանքի կատարման մասին որոշման կայացումը[1]:

Վերոգրյալից ելնելով՝ հանցագործությունների անհատական կանխարգելման օբյեկտ պետք է հանդիսանա անձը, որը հնարավոր է հանցանք կատարի, և նրա վրա բացասաբար ազդող միկրոմիջավայրը: Ըստ այդմ, հանցագործությունների, այդ թվում՝ թմրահանցագործությունների անհատական կանխարգելիչ աշխատանքը պետք է կառուցվի երկու խումբ միջոցառումներով.

ա) միջոցառումներ, որոնք ուղղված են հանցանք կատարելու հակում ունեցող անձանց նկատմամբ ներգործությանը,

բ) միջոցառումներ, որոնք ուղղված են հանցանք կատարելու հակում ունեցող անձանց վրա բացասաբար ազդող անբարենպաստ միկրոմիջավայրի նկատմամբ ներգործությանը[2]:

Սակայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը հնարավորություն չի տալիս անհատական կանխարգելումն իրականացնել ամբողջովին: Այսպես, «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N 1254-Ն որոշման դրույթների վերլուծությունից հետևում է, որ անհատական կանխարգելիչ աշխատանքներն իրականացվում են միայն համապատասխան հիմքերով հաշվառման վերցված (օրինակ՝ առողջապահական հիմնարկներում հաշվառված՝ թմրամոլությամբ տառապող) անձանց հետ: Հետևաբար,

[1] Տե՛ս **Саркисов Г.С.** Индивидуальная профилактика преступлений. – Ер.: Айастан, 1986, էջեր 11-15:

[2] Մանրամասն տե՛ս **Իսրայելյան Գ.**, Քրեաբանություն: Ընդհանուր դրույթներ: Ուսումնական ձեռնարկ /Գ.Վ. Իսրայելյան. – Եր.: Հեղ. հրատ, Աստղիկ Գրատուն, 2020, էջեր 121-128:

նախկինում իրավապահների տեսադաշտում չհայտնված և հանցանք կատարելու հակում ունեցող անձանց նկատմամբ անհատական կանխարգելիչ աշխատանք կազմակերպել հնարավոր չէ: Բացի այդ, իրավական կանոնակարգերը հնարավորություն չեն տալիս ներգործել նման անձի վրա բացասաբար ազդող անմիջական շրջապատի վրա:

Նշված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է կատարել օրենսդրական համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ ընդլայնել կանխարգելման օբյեկտների շրջանակը, մանրամասն կանոնակարգել կանխարգելիչ ներգործության մեթոդների և կառուցակարգերի առանձնահատկությունները[1]:

Բացի այդ, անհատական կանխարգելումը ենթադրում է համապատասխան օբյեկտի նկատմամբ մեծ մասամբ համոզման մեթոդի կիրառում՝ հոգեբանական ներգործություն, որը լիարժեք չի կարող կենսագործվել իրավաբան իրավապահների կողմից: Ուստի անհրաժեշտ է Ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային մարմիններում նախատեսել հոգեբանի հաստիքներ և ամրագրել անհատական կանխարգելիչ աշխատանքներին հոգեբանների ներգրավման օրենսդրական հիմքեր:

Եզրակացություն

Կատարված հետազոտության արդյունքները հանգում են հետևյալին.

1. 2019 թվականից արձանագրվում է թմրահանցավորության անընդհատ աճ, ինչը վկայում է կանխարգելիչ ներգործության ակտիվացման անհրաժեշտության, նոր, ներառյալ՝ իրավական մոտեցումների մշակման անհրաժեշտության մասին: Դրա համար հարկավոր է թմրահանցավորության քրեաբանական բաղադրիչների, այդ թվում՝ թմրահանցագործի անձի քրեաբանական հետազոտության իրականացում:

[1] Մանրամասն տե՛ս **Իսրայելյան Գ.**, Հանցավորության կանխարգելման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության իրավական կարգավորման կատարելագործման որոշ հիմնախնդիրներ // Պետություն և իրավունք հանդես: № 2 (68), 2015, էջեր 5-10, **Իսրայելյան Գ.**, Կիրառական քրեաբանության արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գիտագործնական ձեռնարկ: Երևան, Հեղ. հրատ., Աստղիկ Գրատուն, 2019, էջեր 168-174:

2. Հայաստանի Հանրապետությունում 2017-2022 թվականներին թմրահանցագործություններ կատարող անձանց ընդհանրացված ձևով բնորոշ է երիտասարդ տարիքի (հատկապես 30-49 տարեկան) քրեական ակտիվությունը, ցածր կրթական մակարդակը, մշտական աշխատանքային զբաղվածություն չունենալը, թմրահանցանքը գերազանցապես շահադիտական դրդապատճառով կատարելը և այլն:

3. Թմրահանցագործի անձի քրեաբանական հետազոտությունների արդյունքները պետք է հաշվի առնվեն թմրահանցագործությունների անհատական կանխարգելման ուղղվածությունը որոշելիս, մեթոդը, ներգրավվող անձն ընտրելիս և այլ հարցեր կարգավորելիս:

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը հնարավորություն չի տալիս անհատական կանխարգելումն իրականացնել ամբողջովին: Ուստի անհրաժեշտ է կատարել օրենսդրական համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ ընդլայնել կանխարգելման օբյեկտների շրջանակը, մանրամասն կանոնակարգել կանխարգելիչ ներգործության մեթոդների և կառուցակարգերի առանձնահատկությունները:

5. Անհատական կանխարգելումը, որպես կանոն, ենթադրում է համապատասխան օբյեկտի նկատմամբ հոգեբանական ներգործություն համոզման մեթոդի կիրառմամբ, որը լիարժեք չի կարող կենսագործվել իրավաբան իրավապահների կողմից: Ուստի անհրաժեշտ է Ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային մարմիններում նախատեսել հոգեբանի հաստիքներ և ամրագրել անհատական կանխարգելիչ աշխատանքներին հոգեբանների ներգրավման օրենսդրական հիմքեր:

Օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկ

1. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-Ն որոշումն ուժը

կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N 1254-Ն որոշում: ՀՀՊՏ 2014.11.19/63(1076).1: Հոդ. 1044.7:

2. **Իսրայելյան Գ.**, Հանցավորության կանխարգելման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության իրավական կարգավորման կատարելագործման որոշ հիմնախնդիրներ //Պետություն և իրավունք հանդես: № 2 (68), 2015, էջեր 5-10:

3. **Իսրայելյան Գ.**, Կիրառական քրեաբանության արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գիտագործնական ձեռնարկ: Երևան, Հեղ. հրատ., Աստղիկ Գրատուն, 2019. – 192 էջ:

4. **Իսրայելյան Գ.**, Քրեաբանություն: Ընդհանուր դրույթներ: Ուսումնական ձեռնարկ /Գ.Վ. Իսրայելյան. – Եր.: Հեղ. հրատ, Աստղիկ Գրատուն, 2020. – 192 էջ:

5. **Готчина Л.В.** Криминологическая характеристика личности молодого наркопреступника //Вестник Санкт-Петербургского университета МВД России. 1(49),2011 //https://cyberleninka.ru/article/n/kriminologicheskaya-harakteristika-lichnosti-molodogo-narkoprestupnika/viewer

6. **Кобец П.Н.** Личность рецидивиста и особенности ее формирования //Закон и право. 2001. № 11. - С. 39-42.

7. **Саркисов Г.С.** Индивидуальная профилактика преступлений. – Ер.: Айастан, 1986. – 184 с.

8. **Чуфаровский Ю.В.** Криминология в вопросах и ответах: учеб. пособие. – М.: ТК ВЕЛБИ, Изд.-во «Проспект», 2006. – 144 с.

ЛИЧНОСТЬ НАРКОПРЕСТУПНИКА И НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИНДИВИДУАЛЬНОГО ПРЕДУПРЕЖДЕНИЯ НАРКОПРЕСТУПЛЕНИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Аннотация

В статье представлены результаты проведенного автором криминологического исследования личности наркопреступника по данным 2017-2022 гг.

Результаты исследования автора показывают, что в обобщенном виде наркопреступнику характерны преимущественно молодой возраст (30-49 лет), низкий образовательный уровень, отсутствие постоянной работы, совершение наркопреступлений из корыстных побуждений и т.д. Указанные и другие данные должны учитываться при определении направления индивидуального предупреждения наркопреступлений, выборе метода и решении других вопросов.

Автор считает, что законодательство Республики Армения не предоставляет возможности осуществлять индивидуальное предупреждение в полной мере. Поэтому автор предлагает внести соответствующие законодательные изменения и дополнения – расширить круг объектов профилактики, детально регламентировать специфику методов и механизмов предупредительного воздействия.

Кроме того, автор отмечает, что индивидуальное предупреждение, как правило, предполагает психологическое воздействие на соответствующий объект методом убеждения, что не может быть в полной мере реализовано юристами-правоприменителями. Поэтому необходимо предусмотреть должности психологов в территориальных органах полиции Министерства внутренних дел и установить правовые основания для привлечения психологов к индивидуальной предупредительной работе.

Ключевые слова: структурные элементы личности наркопреступника, индивидуальное предупреждение наркопреступлений.

THE PERSONALITY OF A DRUG OFFENDER AND SOME ISSUES OF INDIVIDUAL PREVENTION OF DRUG CRIMES IN THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

The article presents the results of the criminological research of the personality of a drug offender conducted by the author according to the data of 2017-2022.

The results of the author's research show that, in a generalized form, personality of a drug offenders are characterized mainly by a young age (30-49 years), a low educational level, lack of permanent work, the commission of drug crimes mainly for selfish motives, etc. Specified and other results should be taken into account when determining the direction of individual prevention of drug crime, when choosing a method and in solving other issues.

The results of the author's research show that the legislation of the Republic of Armenia does not provide an opportunity to carry out individual prevention in full. Therefore, the author proposes to make appropriate legislative changes and additions - expand the range of prevention facilities, regulate in detail the specifics of methods and mechanisms of preventive action.

In addition, the author notes that individual warnings, as a rule, involve psychological impact on the relevant object by the method of escape, which cannot be fully implemented by law enforcement officers. Therefore, it is necessary to provide for the positions of psychologists in the territorial police bodies of the Ministry of Internal Affairs and establish legal grounds for involving psychologists in individual preventive work.

Keywords: structural elements of the personality of a drug offender, individual prevention of drug crimes.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 15.11.2023 թ., տրվել է գրախոսության 01.12.2023 թ., ընդունվել է տպագրության 01.12.2023 թ.: